

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիգրաֆիայի համար Տարեկան 12 ֆր.
» » » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու քիչ մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.ԻՆԱ. (Պոլիգրաֆիա)

Редакция на вѣст.

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան նորոգեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյցովին կամ մասամբ:
Ծանուցման տղը 20 սանթիմ. երե-
ֆեմ աւելի անգամներու համար 20 0/0
զեղը կը լինի:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎՄԳՄԱՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎՐԱՅ

(Շար. մեր նախարդ քիշէն)

Եղիշէի պատմածին նայելով, Յազկերտ Բ. Յունաց եւ Քաւչան-
ներուն յաղթելէ վերջ, իր ունի սու-
րբուշտ գարձուց հայոց վրայ եւ
իր հաւատարմներէն Գենչապուհ
հայաստան զրկեց առանձին պաշ-
տօնով (տես Եղիշէ էջ 38 վերեւ-
1852), Գենչապուհ խաղաղութեան
կեղծաւորութեամբ նախարարաց
զխաւորներէն մէկ քանին սիրա-
շահելով կուսակցութիւն յարայ,
նորանոր հարկերու յաւելումը եր-
կրին տնտեսական վիճակը փճա-
նուց եւ հայաստանի կիսանկախու-
թիւնն ապահովող բոլոր պայման-
ները փոխեց ու կաշկանդեց: Ե-
ղիշէ մանրամասնօրէն եւ աւելորա-
նութեամբ մեզ կը պատմէ իր
Գենչապուհի վերագրած բոլոր այս
ու ուրիշ եպիսկոպիտ արարքները,
արարքներ, որ իրենց չափազան-
ցուած վիճակին մէջ իսկ չեն կրը-
նար բոլորովին մեղադրուիլ, երբ
ինկատի ունենանք սա՛ պարագան
թէ՛ տիրող տարրին իրաւունքն էր
իր օրինաց ընկալիւ սովորու-
թեանց համաձայն կառավարել
հպատակներն անխտիր: Եղիշէ կը
գատապարտէ եւ եկեղեցական փա-
ռաց նեւմացումը մը կը համարէ
Պարսից օրինաց համաձայն Պար-
սիկ գաղութները ներկայութիւնը
հայու մը գաղութարութեանը, չինք
գիտեր ինչ իրաւամբ: Ինչ պիտի
ըսէ արեւօք մեր խրոխտ պատմի-
չը եթէ ներկայումս Ռուս կառա-
վարութեան կողմանէ Ռուսահայոց
տրուած անդամներին եւ ազիտա-
բեր հարուածը նկարագրէր իր
նկարուն գրչին տակ:

Սասանեաններու կողմանէ հա-
յոց վրայ ի գործ դրուած ճնշում-
ները, ըստ Եղիշէի, հայերը մո-
գութեան կրօնին դարձնելու նը-
պատակաւ նախապատրաստուած
միջոցներ էին: Այս միջոցներու
անյաջողութենէն վերջ, ըստ Ե-
ղիշէի, Յազկերտի հրամանաւ հա-
յերն մոգութեան հրաւիրող ար-
քունական հրովորակ մը գրուե-

ցաւ. սակայն, թողով Գարսգա-
շի ա՛յն կարծիքը թէ՛ Միհրէրէսէ-
հի կողմանէ գրուած այդ հրովորա-
տակը Եղիշէի՝ Պարսից քէշին
(աղանդ) դէմ գրածին համառո-
տութիւնն է, երբ կը քննենք Ե-
ղիշէն նոյն իսկ իրմով, իր՝ իբրեւ
օրինակ մէջ տեղ բերած արքունի
հրովորատակին մէջ, սպառնալիք
չենք գտներ, այլ լոկ պատուէր մո-
գութիւն ընդունելու եւ մեղադրու-
թիւն: Այս այս հաստատ համո-
զում գոյացնելու համար «Իրա-
ւունք»-ի արգոյ ընթերցողաց ու-
շագրութիւնը կը հրաւիրուի Եղի-
շէի 41-46 էջերուն վրայ. ըստ Ե-
ղիշէի պարսիկ արքունիքէն հրա-
մայուած էր կամ գրով եւ կամ ան-
ձամբ, բանիւ բերանոյ, պատաս-
խանել: Հայք յԱշտիշատ գումար-
ուելով, պատասխանեցին գրով,
որուն անձա՛ ու անյարմար ոճն
ու գրութեան նախատրաի եղանակը
բոլորովին կասկածելի կընեն թըղ-
թին հարազատութիւնը: Ապաքէն
քրիստոնէական ոգւոյ անվայել
էր, եւ ներքի չէր մանաւանդ քա-
ղաքականապէս ընկճուած ժողո-
վրդեան մը ներկայացուցիչներուն
գաղապարտելի անհեռատեսու-
թեամբ՝ գոռոզ եւ կատաղի թա-
գաւորի մը, ինչպէս էր Յազկերտ,
անձին դէմ նախատրաի պատաս-
խաններ տալ, քանի որ կրնար,
ինչպէս ալ եղաւ, ազիտաբեր հե-
տեւանքներ ունենալ: Փարպեցի
եւս այս հարցի մէջ նմանօրինակ
անձա՛ ասացուածոց օրինակներ
ունի (տես Ղազար փարպեցի էջ
141-144 տիպ վերեւեակ 1894):

Հայոց պատասխանը՝ գրուած
տեղեւային հրավառ ազգեցու-
թեամբ, Յազկերտի զայրոյթը
զրգռեց. այս բնական էր նոյն
իսկ թուլամորթի մը համար: Հա-
յոց այս յախուռն համարձակու-
թիւնն ու յանդուգն պատասխանը
պարսիկ աւագանւոյն իրաւունք
կուտար կասկածելու թէ՛ արտա-
քին օտար թելադրութիւն մը կը
յուսադրէր զՀայս: (տես Ղազար
փարպեցի ին էջ 146) Բայց ո-
րովհետեւ Յազկերտ Բ. Մարկիա-
նոսի (յաջորդ փոքուն թէսդոսի)
զխաւոր պաշտօնատարներէն Ար-

գարուրիտս եւ Յարինդիտս իրեն
կուսակից ըրած էր, (*) այսու գի-
տէր թէ՛ Հայք Յոյներէն օգնու-
թիւն չպիտի գտնային:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

— 0 —

Աժանս Հալաւս կը ծանուցանէ
թէ տէրութեան մը առաջին պա-
տուիրակը, Դեսպանախորհուրդին
աշխատութիւններուն մասին. իր
կարծիքը յայտնած է հետեւեալ
կերպով:

Բնաւ տարակոյս չիկայ որ երկ-
րորդ յանձնաժողովը պիտի յաջո-
ղի գտնել լուրջ բարեօրոններ պա-
տնաւորը նուազ ազիտաբեր ընե-
լու համար եւ կարծիքներու առա-
ջին փոխանակութենէն հետք, այ-
սօր արդէն գրեթէ կէս մը ապա-
հով ենք թէ բան մը պիտի ըլլայ
այս մասին, միջնորդութեան եւ ի-
րաւախօսութեան սկզբունքներուն
ընդունելութեամբ:

Գուցէ արդիւնքը այնքան մեծ
չըլլայ որքան կըսպասէ մեզմէ
հանրային կարծիքը, սակայն եւ
այնպէս համոզուած ենք թէ մեծ
պիտի ըլլայ ան:

Սպառազինութիւնները նուազցնե-
լու հարցին գալով, շատ շատ
Դեսպանախորհուրդը պիտի կրնայ
թեթեւ յանձնարարութիւններ ը-
նել կառավարութիւններուն, բայց
այս մասին շատ իրական եւ ար-
դիւնաւոր բան մը սպասելու չէ:

Բազմաթիւ խնդրագիրներ ըն-
դունեցանք հայկական, մակեդոնա-
կան եւ ուրիշ յանձնախումբերէ-
տոնց վրայ չպիտի կրնանք խոր-
հրդակցել, վասնզի բոլոր պատուի-
րակներուն հրահանգները կը տրա-
մադրեն որ Մուրավիէֆի շրջա-
բերականին մէջ պարունակուած
խնդիրներէն դուրս չեննեն եւ Դես-
պանախորհուրդը որոշած է ճշ-
գութեամբ հետեւիլ այդ հրա-
հանգներուն: Պատճառը սա է որ

(*) Տես Տիեզերական պատմութիւն
Գաթրճեանի հատոր Բ. էջ 541 հանօթ
1-2:

մենք որոշ նպատակով մը հաւա-
քուած դեսպանախորհուրդ մը կը
կազմենք, որ իր նպատակին շըր-
ջանակէն չկրնար դուրս ելլել:
Պէտքի վեհաժողովի նման գու-
մարում մը չէ այս. ան կրնար վի-
ճաբանութեան ենթարկել ամեն
խնդիր, որովհետեւ հաւաքուած
էր վերաքննելու դաշնագիրներ ո-
րոնք Եւրոպայի քարտէսը փոխած
էին:

Դեսպանախորհուրդը որոշեց սա-
կայն իր անդամներէն մէկ քանին
նշանակել մասնաւոր յանձնախումբ-
բեր կազմելու համար որոնք պի-
տի ընդունին դրսէն մեզի ուղ-
ղուած ամեն առաջարկ, ծրագիր
եւ խնդրագիր. բայց տալով բան մը
փոխուած չըլլար՝ կոմս Մուրավի-
էֆի շրջաբերականին կէտերէն
դուրս չելլելու մասին մեր տուած
անխախտ որոշումէն:

ՔԱՂԱՅԱՅ — ՎԱՐԺԱՊԵՏ

Թուլչաէն մեզ կը տեղեկագրեն
Տ. Երեւում քահանայ Յովհաննէս.
եանի կարգ մը զայլակալի ա-
րարքները, որոնք ոչ թէ կրօնա-
կանի մը ալ սոսկ աշխարհական
անհատի մը իսկ անպատուաբեր
են: Այդ քահանան Թուլչայի մէջ
երկու տարիէ ի վեր պաշտօն կը
վարէ, եւ առաջին օրէն սկսեալ
ամենաայապանելի սխալագործու-
թեանց երկար շարք մը հիւսած
է եղեր: Բայց դժբաղդաղար տե-
ղեկագրողը մեզ ծանօթ չէ եւ ամ-
բաստանութիւններն ալ շատ ծանր
ըլլալով, ստիպուեցանք այս անգամ
դէպքերու մանրամասնութիւնը չի
հրատարակել ու միայն տեղւոյն
թաղ. խորհրդոյ ուշադրութիւնը
հրաւիրել այդ քահանայի արարք-
ներու մասին, խնդրելով միանգա-
մայն որ խորհուրդը հաճի իրո-
ղութիւնը պարզել թէ մեզ եւ թէ
որու որ անկ է:

— Յիշեցէն Տ. Թագուր Զա-
թալեան մեզ կիմտցնէ թէ քանի-
մը շաբաթ առաջ իր ծերունի
մօր ծանրապէս հիւանդութեան ա-
տեն, հակառակ եղած դիմումնե-
րուն, տեղւոյն Տ. Սարգիս քահա-

նախ չէ բարեհաճած հիւանդին Ս. հաղորդութիւն տալ: Եթէ մեզ տեղեկագրուածը չափազանցուած թիւն չի պարունակեր, ստիպուած պիտի ըլլանք Տ. Սարգիս հայրն ալ պարտազանց քահանաներու շարքին դասել:

— Պուրկաղի վարժ. Հոգաբարձու, թեան կնիքով և Ստեփանոս Յակոբ Սվաճեան ստորագրութեամբ նամակ մը ստացած ենք, որով Տիար Յ. Սվաճեան կը յայտարարէ թէ տեղւոյն Տնօրէն դասատուին դէմ տեղական թերթի մը մէջ հրատարակուածը անձնական ատելութեան արդիւնք է ևն: Բայց ուր դասատուի մասին մեզ ալ աննշապատ տեղեկութիւններ հասած են և հնազանդէ ալ կը հասնին: Որո՞նք պէտք է հաւատալ, հոգաբարձութեան ատենապետին թէ ժողովուրդի բողոքներուն: Մենք այս վերջինները աւելի անկեղծ կը գտնենք և հոգաբարձութեան ատենապետին պաշտպանութիւնը նշանակութեան զուրկ կը դառնանք, որովհետեւ եթէ նա ալ դասատուին համախոհ չըլլար, զանի իր պաշտօնին մէջ չէր պահէր:

Մենք Ռուսոնի Տնօրէն դասատու Սապահ-գուլեանի մասին ալ նոյն դատողութիւնը ունեցած էինք և հոգաբարձու մէկ երկու պարոններու պաշտպանութիւնը կա ընտրութենէ զուրկ նկատած էինք. և ահա վերջապէս հոն պատահած վերջին դէպքերն ալ եկան հաստատեցին մեր դատողութեան ճշդութիւնը, այնպէս որ անցեալ տարի Ռուսոնի տնօրէնը և հոգաբարձուն պաշտպանող զրպարտիչ և անգոյն թերթին ալ այսօր ելած է մեր առջի ընթանները հաստատել: Նոյն թերթի պարոնները անցեալ տարի Պուրկաղի դասատուին անձին ալ պաշտպան էին. բայց այսօր ():

ՇԵՐՈ

ՀԱՏԱԽԻ ԹԱՅՆԻ ՖԷԳԱՅԻ-ՀԱՅԴՈՒԿԻ
ՀԵՐՈՍԱԿԱՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ
1896թ. ՄԱՅԻՍԻՆ

Ա.

Լուսնեակ գիշեր մ'էր, աստղեր բերանոր
Փալիւմ էին, լուսն, խորհրդաւոր...
Երկինքը պարզ էր, պարզ, ջինջ, կապուած,

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (12)

ՓԱՄԱՆԱԿԱԿՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՍԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թ.

Վահրամ երեկոնները թրքական ժամը 11 1/2ին գործատեղին փակելով տուն կը վերադառնար. փետուար 6ի երեկոյին բնութեան առաջին խայտանքէն հրապուրուած, Յովհաննէս աղայի տան մէջ անցած դարձած դէպքերու բոլորովին անտեղեկ, ինք ալ ուրիշներու հետ գետեզրը իջաւ Գարա Ս. ի վսեմ տեսարանը վայելելու համար ամեն ատենի պէս, վերջապէս վառ մարմուռներուն ինքը աւելի ուշադիր կը դարձնէր ներկայ գտնուեցաւ:

Պատահ մ'ամպ չը կար, յստակ էլ չը տոկ:

Եթէ նկատ քաղեր, անխօս, անշնչեւ Ձիւնուած, զրահուած, մաւր ու թաւեւ իրեւ պատգարակ կապած հրացանին վերաւոր հայդուկ մ'վրան կ'տանին...

Անցան շատ անցեր, ձորեր, հովիտներ, Մինչեւ որ հասան Դուշմանայ լեռներ. Օրբան քաղերի, ահա որ Դուշման, ի քեզ շատ քաղեր մահ տան ու ստանան:

— «Դէ' պ ա' ջ» խուլ ձայնեց մին հայդուկներէն

— «Ճիշդ դէպի Դէրիկ» ձայնեց նա նորից:

Ընդ հուպ դէ' պ Դէրիկ քաղերն ուղղեցին, եւ Դէրիկ հասան ճիշդ կէս գիշերին:

Արեւն քրտինքում շաղխուած համակ, Գալիւն ուսերից առին պատգարակ, Ձոր քարի վրա վար դրին մարմինն, իրենց արնաներկ ընկեր-հայդուկին:

Յանկարծ ուշաբեց, տեքայ վերաւորն, Յանկարծ նա կանչեց տղերք իւր բուրն:

— «Պուս մը ջուր, տղերք, այլուում եմ մրկուում»

— «Ես'ւտ տուէք, քանի շունչ կայ իմ բերնում»:

— «Ինձ Դէրիկ տարէք, ո'ր եմ այժմ, ո'ր եմ...»

«Վէրքերս շա'տ են խոր, պիտ'մոռնիմ, գիտեմ»:

«Կուգէի քիչ էլ կենդանի մնալ, Իսլամի որդեց վէրք տալ ու ստանալ»:

«Շէրո', ջան Շէրո', արեւից մտաւ, Դէրիկն ես արդէն, հանդիստ կաց խաղաղ»:

Ինք քիւրդ ընկան քո գնդակներէն, Հինգ էլ յօշոտուած քո կեռ խենչաւից:

«Շիկակն չէր տեսել այսպէս հարսանիք, Մեր ութը հոգուց փախան անարիք, Շատերն զոհ եղան մեր գնդակներին, Շատերը մատաղ հղան մեր սրին...»

«Եմինէ-ձավչին, ցեղապետ Մամէն, Ամբողջ Մէրդիկ ցեղն և Շիկակ թամէն»:

«Է' չեն մոռանար «գեաւուր» հայդուկին...»

«Է' չեն մոռանար Հայ-Ջան-Ֆէդային»:

Ձայն տուին տղերք, մէկը ջուր տուաւ Դողդոջուն ձեռքով Շէրոն ջուրն առաւ:

Խմեց իմի ումպ, ծանր հառաչեց իր ընկերներին վերջին խօսքն ասեց:

Գիշերուան տուջին ստուերները ըսկան ծանրաւար, բայց անիկայ իր խոր զննողի գիրքին մէջ շարունակեց մնալ մինչեւ որ միջնազր տեղի տուաւ մութին. անկից տուն դարձաւ. զգեստները փոխեց, պարզ արդու զարդէ մը ետք պատրաստուեցաւ Յովհաննէս աղայի բնակարանը երթալով Հրանդի ծննդեան տարեգրածին անթիւ իր խնդրակցութիւնները անոր ծնողքին յայտնելու, մէկ մըն ալ իր սանուհիին աւանդելու նախորդ գլուխին մէջ պարզած իր մէկ որոշումին համաձայն:

Մայրը իր զաւակին ուրախ մեկնումը տեսաւ. քաղցր անուրջի տպաւորութեան տակ եղողի մը պէս, Վահրամ ինչպէս ամեն իր հոգիի վիճակը ունեցող երիտասարդ, անոյց երեւակայութեամբ մը օրօրու ելով ճամբան կը կըտէր. արդեօք հնդատառնամայ Հրա-

— «Է' մնաք բարով, ընկերք, հայրենիք է' մնաք բարեւ, անցին սիրելիք, Ինձ Դէրիկ թողէք, Ձաթօր կողքին Սկսեալ պիտ' հանդիս իմ սիրան ու հոգին...»

«Կտակս այս է ձեզ, վրէժ եւ վրէժ...»

«Կո'ւ, պատերազմ, անընդհատ, յաւերժ...»

«Վրէժս կը թողում ձեզ լա... ժին փա... ուայ...»

«Վը... րէժ իս... լամից, վր... րէժ ան... մո... ուայ...»

Ասաց եւ լոնց, լոնց յաւիտեան Աւանդեց հոգին, ոսկերքն ստեղծեց... Ո' Լուսին կա'ց դու, մի պահ, մի վայրկեան

Անտուտ վկայ լի'ր հերոսի թաղման:

Չ'կար ոչ ահբեք, ոչ խաչ-Աւետարան, Ոչ խուրդ, ոչ բուրվառ, ոչ էլ շարական Չ'կար քառաձայն երկար ալիւր... Ոչ իսկ բահ, բրիչ, ոչ սաղմոսեղծութիւն:

Փաջաց հրացաններ սահրու արաքին Վրէժ, ծո'ւն, գնդակ, բոց եւ հո'ր ժայթքին...

Մերկացեալ սրեր բռնած խաչածէս կերպուն ծնկաչոք «Վրէժ արգարեւ»:

Ջան-Ֆէդայիներ նորից մի բերան «Վրէժ», գոռացին «Վրէժ անտուտ»:

«Վրէժ» արձագանգ տուեց Դուշման տար, «Վրէժ...» արձագանգ տուին ձոր ու քար:

Յուզուեց և լուսինն դողաց դալկահար, Ամպեր հաւաքեց վերան մութ, խաւար, Ամպրոպ և կայծակը, ահա որ սրտմունք Օրհն'սն է երկրի, շանթ, փայտաւորնք:

Ամէնք միասին «Վրէժ...» կ'որոտան «Վրէժ արգարեւ, վրէժ յաւիտեան...»

«Վրէժ Շէրոյի, վրէժ Ձաթօյի, «Վրէժ Շատախու ալ առիւծների...»

Գո'ւ, ահա լոպէ, սոսկալի վայրկեան «Վրէժ» կը գոռայ բնութիւն համայն երկինք եւ երկիր իրար խառնուեց... Խոր միջութեան մէջ ամեն ինչ թաղուեց:

(Շատուանկեցի)

ՎԱՍԻՆԱՅԻ

ԲԵՐԵՍԱՍԻՆԱՅԻ ԲԵՐԵՐՈՒԹԻՒՆԸ

Ընթերցարանի նման օգտուկար հաստատութեան մը կարեւորութիւնը հասկցող ամեն ոնձ, անշուշտ, անխառն ուրախութիւն

նոյնը ո'րքան զգլխիչ պիտի գտնէր ան գիշերը. արդեօք իր միակ գեղունին ո'րքան գոհ պիտի ըլլար իր անոր հաղորդելիք վերջնական որոշումէն. հոգ պիտի երգուէին տեղական և ազգային երգեր, պար պիտի բռնէին վերջապէս ի պատիւ իր հոգեհասարակին, միօրինակ պատկեր մը հաճելի որ աչքին տաջեւէն չէր հեռանար և ինքը ասոր համար աւելի գոհ էր. ոտքերը մեքենաբար կը կտրէին Յովհաննէս աղային տունը անտառի ծառերէն, յանկարծ լացի ու կոծի սուր ճիչ մը իր ուկանջին զարկաւ: Վահրամ երեւակայութեան թմրութիւնէն իսկոյն սթափեցաւ, սարսուռ մը զգաց. երազը ցնդեցաւ, ու շարունակեց իր լոպէ մը լարեց, քայլերը մէկէն փութացուց կարծես արկածաւոր օգնութեան վազողի մը պէս. երկու վայրկեանէն ինքզինքը Յովհաննէս աղայի տան առջեւը գտաւ. հազիւ թէ

մը զգաց տեսնելով նորակազմ ընթերցարանը ընկերութեան առաջին եռանդուն քայլերը: Սահային դժբաղդաբար, ինչպէս յաճախ ելած է վառնայի մէջ, այս անգամ ալ այնքան եռանդով սկսուած գործ մը շատ շուտ երեսի վրայ ձգուեցաւ:

Ինչ եղաւ նորէն, ինչ զօրաւոր արդիւնքներու ու անգիմադրելի խոնգրոտներու հանդիպեցաւ ընթերցարանի վարչական ժողովը, որ ամիսներէ ի վեր ընկերութեան բոլոր գործերը երեսի վրայ թողած է:

Այս առիթը գործը մօտէն տեղեակ լորսը եղելութեանց՝ ստիպուած է յայտարարելու որ ո'չ մի դժուարութեան, ո'չ մի արգելքի չի բաղխել ի դատ, ընկերութիւնը արտաքուստ յաջողութեան լաւագոյն պայմաններու մէջ կը գրտնուի և թէ լոկ նոյն ընկերութեան անդամներէն ամանց մզլուած, ամենանկ հայեացքներն ու անձնակաւ նկատումներն են միակ պատճառն ընթերցարանի ներկայ աննախանձելի դրութեան որ դէպ ի կազմալուծուած կառավարող զայն:

Իրերու այս շատ ցաւալի կաշուութեան հանդէպ պարտք կը համարիմ հրապարակաւ ընթերցարանի աղմուռ ու թանկանց անդամներու լուրջ ուշադրութիւնը հրաւիրել ընկերութեան ներկայ անկերպարան վիճակին վրայ:

Քաղցր է յուսով թէ ընթերցարանի օգտուկար Պատ. վարչութիւնը պիտի փութայ ամեն բանէ վեր հանրային շահը նկատի առնել և անձնական նեղ հաշիւներ մէկ կողմ դրած՝ ընդ փութ պիտի աշխատի ընկերութիւնը գնել այն ճանրուն վրայ, ուրկէ ընթանալով միայն պիտի հասնի իր նպատակին:

Այս յուսով կըստանանք:

Կ. Շ.

ԲԱՆԱՒՈՐ ՊԱՆԱՅ

Հասցովօն կը գրեն մեզ:

Ընթերցարանի օգտուկար հաստատութեան մը կարեւորութիւնը հասկցող ամեն ոնձ, անշուշտ, անխառն ուրախութիւն

գոնէն ներս մտած իր առջեւ ելաւ Հրանդի որպազին ձայնով մը «ա'խ, պարոն Վահրամ, հայրիկս տարին տարին» ըսելով:

Վահրամին տան գոնէն ներս մտած պահուն քիչ հետեւին ստուեր մը սահեցաւ անցաւ գլուխի սպասնական շարժումով մը:

Հրանդի «հայրիկս տարին» բառերը բաւական եղան Վահրամը գործի ընթացքին մէջ գնեցաւ համար. այս անակնկալ լուրը անցնիւններուն համահաւասար շանթահարեց զինքը. նախաստեղծեալ առաջացաւ ուր ուկին վերգինէ չի զէն ստատար սպասող ծովամայրի մը պէս կը զաւարտէր չ'ը հեծկաւքներ արձակելով. խոգճ կնկան աչքերը ցամքեր էին, արցունքը դադրած էր: Յիշողութիւնը կորսնցուցաւ պէս:

«Լուր մը բերի՛ր, Վահրամ, ըսաւ, յանջ

նորհիւ մեր մանուկները . որոնք ընդհանրապէս տաճկաստանին կը վարժուին ազգային տան մը մէջ հայերէնի և նախնական կրթութեանց . ընկերութեան հասոյթը ամսաբաժիններէ կը գոյանայ . Գըրեթէ երկու տարի առաջ իշխալ ընկերութեան անգամը բարեհաճած էին ինպատու վարժարանի վիճակահանութիւն մը ընել . արդարեւ գովելի էր իրենց աշխատանքը . բայց չի յաջողեցան բաւական գումար մը գոյացնել . սակայն զժառանգար գոյացած գումարին 100 ֆրանքի մօտ մէկ մասն ալ մնացած է մինչեւ ցարդ ընկերութեան անգամներէն մէկուն վրայ որ վերջերս պաշտօնէն ալ հրաժարած է . ուստի եթէ կարելի է , թող հաճի իր քով մնացած գրամը յանձնել ընկերութեան որ այժմ գրամի անհրաժեշտ պէտք ունի :

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Կ. Պոլսի 13 մայիս 1899(*) Սիրելի ընկերս

Ձեր 8 թուակիր նամակով Պոլսի և հայրենիքի մասին տեղեկութիւն կուզէիք : Ահա տակ Պոլսի վիճակը . միեւնոյն խառնութիւնք կը շարունակուին : Վերջերս աքսոր վրկուեցան Բաղէշու կողմերէն ելլու ազգայինք , Անտօնեան Յարութիւն և Չըքօեան Նազարէթ . բաւական օրեր անցան , բնաւ տեղեկութիւն չունինք թէ արդեօք ի՞նչ եղան . հայրենիքը աքսորուեցան թէ ուրիշ տեղեր , յայտնի չէ :

Նոյնպէս անցեալ շաբաթ հայրենիք երթալու նպատակաւ Ռուսաստանէն հաս վերադարձաւ Ղազար Անտօնեանը կորսուած է , չի գիտցուիր թէ ուր տարին զինքը : Ահա այս պարագաները կը հաստատեն թէ Պոլսի վիճակը

(*) Այս մամուլը նամակը մեզի հաղորդուած է հրատարակուելու համար : Ծ. Խ.

կարծ աղերսական ծայրով մը : —Բայց , ի՞նչ լուր , տիկին , պատասխանեց վահրամ անձկանօք : —Ըսել է տակաւին դու չես գիտեր , քեզի չեն իմացուցեր . Յովհաննէս ազան տարին , բանտ տարին , զատակ , ա՛խ չը գիտեմ ի՞նչ պատճառով . ա՛խ աս ի՞նչ կրակ էր թափեցաւ մեր գլուխը : —Ի՞նչ կըսէք , տիկին . բայց ի՞նչպէս կըլլայ այդ : —Ինչպէ՞ս կըլլայ , ես ալ չեմ գիտեր : Այո՛ , այո՛ , տարին» ըսաւ տիկին Վերգինէ հառաչանքի սուր շեշտով մը , զառանցողի մը պէս : Հրանոյշ գէմըը ձեռքերուն մէջ ծածկած , շնչահեղձ ըլլալու աստիճան յորդարեցութեամբ սկսեւ իր վահրամին ներկայութիւնը զգացած ատուապը արծարծելու . ասուածեան նուազումէն սթափելէն ետք խեղճ հայուհին

քու գիտցածիդ նման միեւնոյն դառնութեան մէջ է : Իսկ գալով հայրենիքի մասին , երէկ նամակ առինք . գրած էին թէ ապրիլի վերջը Գիւրգերը յարձակած են խլաթայ Գիւրգու գիւղին վրայ ուր երեք տուններ կրակի տուած են . մարդոց կորուստ ալ եղած է : Նոյնպէս մէկ երկու օրէն վերջ Գիւրգեր յարձակած են կիւղէտերէի կարգի գիւղին վրայ . հոն եւս մարդու կորուստ կայ : Նաեւ հայրենիքի , մասաւորապէս խառնած գիւղի նամակներէն կը տեղեկանանք որ , ապրիլ ամսոյ մէջ Աստուր ալան սպաննուեր է Լարքաշի Աօէն , որն որ մեր գիւղին քանդուելուն պատճառ եղած է : Վերջապէս ամէն կողմեր հարստահարութիւնք անպակաս են , սովոր ալ տիրած է . եթէ այսպէս մնայ վիճակին , ա՛լ Հայաստանի մինակ անուն կը մնայ պարապ հողերով . Աստուած գութ տայ , մեր քրիստոնեայ պաշտպաններուն :

ՆՈՒԱԳԱՆԱԴԵՍ

Քաղաքիս աղջկանց կրթարանին խնամակալութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ մայիս 26ի երեկոյն Ստէտինէնիյէ սրահին մէջ նուագահանգէպ մը տեղի պիտի ունենայ ինպատու իշխալ կըրթարանին : Նուագահանգէպին խնամք պատրաստուած յայտագիրը պիտի հրատարակենք մեր յառաջիկայ թիւով :

ԼՐԱՔԱՂ

Սուշավայէն կիմացնեն թէ նոյն քաղաքի բնիկ Հայրենի ծանօթ կայուածատէր և եկեղեցւոյ հոգաբարձութեան նախագահ ասպիտ վարդերէս Յոն Բառնգուլ զխնամեցած է , վիէննայի մէջ իր վրայ կատարուած վերաբուժական

գործողութեան մը հետեւանքով , Մարմինը Սուշավա փոխադրուելով յուզարկուարութիւնը կատարուեր է չքեղ հանգէսով : —Վիզթորիա թագուհիին 80րդ ծննդեան տարեգարծին առթիւ Պատրիարք . փոխանորդ . հայրը անդլ . Գիսպանտունը երթալով գիսպանը շնորհաւորել է Ս. Պատրիարքին անունով : —Երուսաղէմի վանքին թարգման Գէշիշեան Տ. վահան վարդկայսերական հրամանով արտօնուեր է կրել Բարսիոյ թագ պատուան . շանին Կ. աստիճանը զոր իրեննրու իրած էր վիզէլով կայսրը իր ուխտագնացութեան ժամանակ : —Սուլթանը զատկի առթիւ 50000 դահ . նուրբեր է հայոց Պատրիարքարանին : —Պատրիարքը հրահանգ տուեր է Պոլսոյ թաղ . Խորհուրդներուն եկեղեցիներու մէջ նոր պնակ մը հաստատել որուն հասոյթը պիտի յատկանայ կոտորածի ժամանակ փաստած դաւաճային եկեղեցիներուն նորոգութեան : —Իզմիրի հայ հարուստ և բարեկեցիկ դասակարգին ազգային զգացողմներու մէջ տիրու պատկերը կը ներկայացնեն նոյն քաղաքէն «Բիւզանդիոն»ի գրուած հետեւեալ տողերը . «Մտնենք իրենց տուները . հայկապ չենքեր , չքեղ կարտսներ կարգ ու սարք , սպասաւորներ , սպասուհիներ , դռնապաններ . ամեն բան իր տեղն է : Մարդ երբեք մտքէն չանցնել թէ Հայու մը տունն է , սովորութիւնը , բարքերը բացարձակ կերպով օտարացած են . հայրենիք իր առողջ շեշտը կորուսած , ջլախտաւոր բան մը դարձած է՝ յունարենի , ֆրանսերէնի խառնուածով մը : Հապտ պղտիկ անմեղեկներն որք նոր սերունդը կազմելու կոչուած են . օտար տարրի մը խնամքին տակ մոռցած իրենց լեզուն , օտար լեզուներ միայն արտասանելէ զատ բան չեն գիտեր : » Թղթակիցը իբր գործունայն ցաւովի վիճակին՝ կառավարէ հարուստ հայ տիկիներուն հայկա-

կան մանկապարտէզ մը բանալ իրենց դաւաններուն համար , որոնք արդի հանգամանքներուն մէջ բոլորովին պիտի օտարանան : —Սպանիացի նշանաւոր պետական մարդ Գաթիելարի մեռեր է : —Կը կարծուի թէ Բարիդի վճարեկ ատեանը , որ հիմայ Տրայֆուսի խնդրով կըրաղի , պիտի որոշէ որ այս դատը վերստին քննուի և ասոր համար Տրայֆուս զրկուի պատերազմական նոր ատեանի մը առջեւ : —Յուսնական հանրապետութեան նախագահին Տիֆոն արտասանած ճառին առթիւ ռուս մամուլը շատ կը գովէ Տ. Լուպէ : Մասնաւորապէս Նովոսթի կըսէ թէ անոր կատարեալ պարտաճանաչութիւնը և հանդարտ բայց հաստատուն նկարագիրը իրեն վայելելու անհրաժեշտ հեղինակութիւն մը զոր իր նախորդները չունեցան : —Կ. Պոլսէն Յաւանքաբարբար ցայտունի կը գրեն թէ Էնկիւրիէն Պաղատա երկաթուղիի մը ժըրաքիւրը սուր հանգամանք մը ըստացած ըլլալով , Ռուսիա կը սկսի յատուկ զէրը մը բռնել այս տեսակէտով : Գիսպանը կէս պաշտօնապէս արդէն յայտարարեց Դրան թէ Էնկիւրիէն Պաղատա երկաթուղիի մը շինութիւնը , եթէ Ռուսիոյ սահմանագլխին և անոր ազդեցութեան չընթանալին բոլորովին մօտ ըլլայ , ռուս կառավարութեան մտքին մէջ ծանրակշիռ անպատեհութիւններու վախը պիտի արթնցնէ . իսկ եթէ երկաթուղին Քոնստանդնուպոլիս Պաղատա գացող գծով մը երկնայ , ընդհակառակը , չի կրնար ու եւ ատարկութեան տեղի տալ , որովհետեւ այն ատեն զիծը ռուսական սահմանագլխէն բաւական հեռի պիտի ըլլար :

Ինչպարձից համագումները այս տարի ալ արցունքով ուսենք : » Սեղանը պատրաստուեցաւ սակայն ոչ ոք ախորժակ ունէր բան մը ուտելու , միայն սովորութեան հպատակած ըլլալու համար երկերկու պատառ հագիւկերան , որմէ ետքը քիչ մը ասեն ալ կեցաւ վահրամ . խօսքը միշտ օրուան աղէտքին վրայ դառնալուն յուսատու խօսքեր ընելէ ետք տուն վերադարձաւ անհնարին թախծութեամբ : Այդ գիշերէն ետք տիկին Վերգինէի եւ Հրանոյշի կացութիւնը շարունակական տանջանքի ամբողջութիւն մը եղաւ :

Ե. Կառնարական Շարունակելի

Խանոյշիս ծննդեան տարեգարծի օրը , ա՛խ գիմանալիք ցաւ է՝ հեծկոտաց տանակիւնը այնպիսի ծայրով մը որ վահրամ ալ յակամայից սկսաւ արտասանել : —Դժբաղդութիւններն մարդուս համար են , տիկին , թո՛ղ թէ հոս յայտնի զժառանգութիւն մը ես չեմ տեսներ , յուսահատելու բան չի կայ , ինչպէս միշտ , այս պարագային ալ արիւստիք եղէք : » Միեւնոյն բանը շատ աւելի քնքշութեամբ կրկնեց Հրանոյշին ալ . վահրամի ծայրը սփոփելի հրաշտակի ազդեցութիւն ունեցաւ անոր վրայ , որ հեծեծանքը կարեց . այս բանը կենդանութիւն սուաւ տիկին Վերգինէին : —Մայրի՛կ , ասուածէն ի վեր բարանդ փշրանք չես դրած , քեզի ուտելիք բերե՛մ , հարցուց Հրանոյշ : —Բեր , զուակա , բե՛ր , որպէսզի տա-

ԿԵՆՃ-ԹԻԻՐՔԼԵՐ

Չամչանյան կիւնքի նստեցումը. տա կէնճ թիւրքերին միւրեւի. ճի էֆէնարը (օրկան) օլան «Մէշ-վէրէթ» կաղէթասընտան պիր պէնտին իւք զըսմընը թէրճիւմէ. թէն տէրճ իթմիշ իտիք:

Մէշքիւր պէնտ կէնճ թիւրք գօմթէրէրին եսլընըզ գալէմ շուարասը օլուպ, ամէլիյաթա ասլա թէշէպպիւս իթմէք իսթէմէտիք. լէրինի պիր տախի ըսպաթ իթմիշ տի. ատամճըզլար տէյօր «պիդ-տէն իշ պէքէմէյին. պիդ կաղէթաճըլըզ, ամէլիյաթա պաշլայա. ճագ օլուր իսէք, կաղէթաճըլըքիմ եսպաճագ. պիդ էկէր թիւրքիւ տախիլինտէ պիր գարըշըգըլըք չըգարըր իսէք, էվրոնալըլար ֆայիտէլէնէճէքլէր» վէ սայիրէ:

Շիմտիյէ գատար կէնճ թիւրք. լէրտէ պիր շէյեաբար եսլսօտ ես. բապիլիւր իմիտինտէ օլանլար ի. շիտսինէր:

Թիւրք վաթանքէրվէրլէր իշ. լէմէք իշիւն թիւրքիւտա հէր նէվ գօլայըզ վար իքէն, գարը կիպի էվրոնայա ալլաճագատան մատա պիր շէյիճրա իտէմէյօրլար. էվրոնա տա 20 սէնէ ֆրանսըլճա կաղէթա նէշը իթմէքտէն իսէ, 20 կիւն զարֆընտա 5 կէնճ Սթանպօլտա պիր նուսայիշ իճրա իթմէլէր, նա. տան էհալինին ուլանմասընա ատ. հա պէօյիւք իւրտմէթ իթմիշ օ. լուրլար. ֆագաթ նիւսայիշ իթ. մէք իշիւն հիւրէք լալըմ. թիւրք կէնճլէր իսէ էօլիւմտէն գօրգըյօր. լար, օնլարտա մէպտէ վէ սէպաթ նատիւր տիր, նատիր. պիւթիւն թիւրքլէրտէ պու կիւնէ գալտար էօլիւմիւ կէօղիւնէ ալան հիշ պիր քիմսէ կէօրիւնմէտի. զիրա օնլար հազըր մէմուրիյէթլէ պէյ ու բա. շա օլմայա հազըրլանմըշ տըրլար. Օնլարա էմիլիէթ իտուպտէ սըր. տաշ օլմայա չալըշանլար էն պէօ. յիւք պիր խաթա իշլէմիշլէր տիր:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ՛ քաղաքի երիտասարդներէն ոմանք ինքնաբերաբար որոշած են մայիս 29ին Սաէտինէնիյէ սրա. հին մէջ «Լաբըրցիա Պօրճիա» ուղ. բերգութիւնը թիւրքերէն լեզուով ներկայացնել ի նպաստ Տ. Յարու. թիւն Չաքրեանի որ իրօք նպաստի ամենակարօտ զրուծեան մէջ է և քաղաքայաճած առողջական վիճակ մը ունի:

ՏԱԽԻԼԻՅԷ

Մէպուսան մէճլիսինին քիւշա. տը միւնասիպէթի իլէ Բրէնս հազըրէթլէրի իրատ պուլուրտըլը

նութգտա Բրէնսէս Մարիա Լու. իզա հազըրէթլէրինին վէֆաթըն. տան տօլայը թէքմիլ Պուլկարիա էհալիսի թարաֆընտան վուգու պուլան մաթէմ նիւսայիշլէրինտէն պէյանը թէշէքքիւր, Պուլկարիանըն գուրթարըճը Ռուսիա, աիկէր պէօյիւք տէվլէթլէր, գօմշու հիւ. քիւմէթլէր վէ պա խուսուս Պա. պը Ալի իլէ տօսթանէ մինասէ. պաթտա պուլընտըլընը, վէ Պուլ. կարիանըն Լա Հէյ գօմֆէրանընա տալէթ օլընտըլընը վէ նիհայէթ Սօպրանիյէ ինթիլասպլարընըն սէրպէսթ սուրէթլտէ վուգու պուլ. տըլընը վէ պու սէպէպլէ մէճլիս. տէ հէր պիր ֆըրգայա մէնսուպ զեվոթըն հազըր օլտըլարընը զիքը իթմիշ տիր:

Սօպրանիյէ հիւքիւմէթ ֆըր. գատընա մէնսուպ Մ. Վաշէֆի իէ. իս ինթիլասպ իթմիշ տիր: Քէզա իւշ զեվաթ իւրիս վէքիլի ինթի. խապ օլուպ, պուշլարտան պիրիսի Սթանպօլիսթ տիր:

Աթանս Ռոշմէնին պիր թէ. լէկրաֆիա կէօրէ՛ Սթանպօլիսթ վէ Բատոսլափօիսթ ֆըրգալարը պէյինտէ պիրուտէթ հասըր օլ. տուլընա տայիր զուհուր իտէն շայէայը թէքղիւք իթմէք էֆէնա. ըր իլէ՛ Մ. Կրէքօֆ վէ Մ. Բա. տօսլափօ Սթանպօլիսթ ֆըր. գատըր իւրիսի Մ. Բէթքօֆըն վիւ. քէլա մէճլիսինէ տախիլ օլմասընը արգու իթմէքտէ տիրլէ:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԷ

Վիէննատան մայիս 12/24 թա. իրիսի պիր թէլէկրաֆա նազարէն էրմէնիլէր թարաֆընտան Լա Հէյէ կէօնտէրիլիլ օլան մէպուսլարըն Գօնֆէրանտա միւրոճատթ իթմէ. լէրինի մէնն իթմիւրմէք իշիւն Սթանպօլիսթ Սթանպօլիսթ Լա Հէյէ եօլլամըշ տըր:

Տիւրքիլիլէրին եէնիտէն ըսհան իտէնէքլէրի մէօճթմէլ օլմալլէ թիւրք հիւքիւմէթի Սուրիա ճի. հէթլինէ պիր չօգ տօքէր եօլլա. մըշ տըր:

Վիէննատան այնը թարիլլէ պիր թէլէկրաֆա կէօրէ, օթուգ. պին էրմէնի մուհաճիլլէր Բուսի. ատան թիւրքիւ սինօըր իւզլէրինէ թօլլանմըշ օլուպ, մէմլէքէթլէրի. նէ ալտէթ իտէպիլմէք իշիւն միւ. սատէ օլընմասընա պէքլէմէքտէ իմիշլէր:

Կիրիտտէն 6000 իսլամլար էմլաք ու արազիլլէրինի ուճուզ ֆիւթլէ սաթմըշ օլուպ թիւրքի. այա հիճրէթ իթմէքտէ տիրլէր:

Երուսան էլլիսի Մալրօգօր. տաթօյա Սուլթան տօսթանէ պա. ղը միւքիւմէթ պուլընտըլըն. տան տօլայը Գրալ Եօրկի պա թէ. լէկրաֆ Սուլթանա պէյանը թէ. շէքիւրաթ իթմիշ տիր:

Բուսիտա գըթլըզ օլան վի. լայէթլէրտէ խաթալըզ հիւքմ

իթմէքտէ օլտըլընը եսպմըշտըգ. եսլընը Սաւարա. վիլայէթիտէ պու կիւնէ գատար 15000 քիշի օլմիւշ տըր:

Սթանպօլտա կէպէն շահէա. յա պինտէն, թիւրքիւ մուրա. խաթարը՛ գօնֆէրանտա Պուլկար մուրախասլարըն պալըր մէսէլէլէր. տէն տօլայը իւշ վէրմէլէրինէ գարըր Բրօթէսթ իտուպ, սնլէ. իւն իւշ վէրմէլէրի Սուլթանըն հիւքիւմտըլըզ հազուզընա մու. խիլ տօտ իթմիշլէր:

Սթանպօլտան քէշիտէ օլընտն պիր թէլէկրաֆ՝ Ռուսիատա պու. լընտն էրմէնի մուհաճիլլէրին թիւրքիւտա ալտէթ իթմէլէրի հազգնտա իքի հիւքիւմէթլէր պէյ. նինտէ ճէրէյան իտէն մուխապէ. ըաթըն Ռուսիա սէֆիլի Մ. Նէ. լիտօֆըն ալտէթլինէ տէկին թէէ. խիլ օլընտըլընը պիրտիրիյօր:

Սապըզ սատրազաճ Սահմուտ Նէտիմ բաշանըն խաթմէլէրինտէն օլուպ, աիլիլէն Եըլտըզ սէրայըն. տա էն պէօյիւք թէէսիւր սահպի մէմուրլարտան պուլընտն Լուլֆի ալայա տալա ինմիշ վէ ազա. պինտէ վէֆաթ իթմիշ տիր:

Իսքէնտերիլէտէ եուճուրճագ. տան թուլթուլմըշ օլան իքի թիշի վէֆաթ իթմիշլէր տիր:

Ռոմանիատա Եաշ Տարիլլիսուլն թալէպէլէրի պիր միթինկ թէշքիլ իթմիշ վէ շու թէճէմիւտէ Եա. հուտիլլէրէ գարըր շիտէթլի նուլթըլար սէօյլէմիշլէր տիր: Պա. տէհու թէճէմիւ օլան մահէլիտէն չըղուպ. սօղազլարտա կէզտիլլէ. լինտէ պիր խալը գատապուլը վէ քէօյիւ էհալա տախի թալէպէլէր իլէ գարըշը օլարագ, պու սու. լէթտէ իւշ պին գատար օլմուշլար վէ Եահուաի էվլէրի վէ մաղալա. լարը իւզլէրինէ հիճիւմ իթմիշլէր տիր: Չապլիլլէր միւտախէլէ վէ մէնն իթմէք իսթէմիշլէր իսէտէ, էհալինին հիտտէթլինտէն գօրգա. ըաք իքի տէֆա զըրազըզ գաշ. մըշլար աըր: Նիհայէթ տաքէր իմտատա եէթիշմիշ վէ էհալիլի տալըլթմըշ տըր: Եահուտիլլէրին քիւլլի գարարը վար: Կէրէք է. հալի, կէրէք զապլիլլէրտէն վի կէրէք եահուտիլլէրտէն եարէլլէր չօգ: Նիւսայիշ թէրթիպ իտէն. լէրտէն պիր գաշ քիշի թէվզըֆ օլընմուշլար վէ պուլլարտա պիր գաշ գատըն տախի պուլուլմագ. տա տըր:

Պուլտան էվլէլ ինկիլթէրրա վէ Ֆրանսա տէվլէթլէրի պէյ. նինտէ զուհուր իթմիշ օլան Ֆաշօ. տա մէսէլէսինին գահրամանը գօ. մանտան Մարշան թիւլուն շէհրի. նէ վաթըլ օլուպ, Ֆրանսըզ էհալի. սի վէ հիւքիւմէթ թարաֆընտան պէօյիւք սէվինճ վէ հիւքիւմէթ գապուլ օլընմըշ տըր:

ՄԵՏ ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ՍՏԵՐԱ ՔԱՂԱՔԻ

ՊՈԼԿԱՐ ԿԱՍԱԿԱՐՈՒԹԵՆԵՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԱԼ

Ա. ՊԱՐԳԵՆԷ 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հե. տուեալ կերպով, ներկայ տարւոյ՝ Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր. Յունիս 7 1,500 » 135,180 » Օգոստ. 4-5 2,000 » 241,780 » Սեպտ. 3-4 » 309,080 » » 23-24 » 363,240 » Հոկտ. 13-31նոյ. 16,000 » 3,379,040 »

ԳԻՆԵՐՆ ԵՆ ՈՍԿԻ. ՏՐԱՅԳ

Կէս	Քաղաք	Մէկ ուլլէր
1-25 ֆ.	2	2
26-50 ֆ.	4	2
51-75 ֆ.	5	2
76-100 ֆ.	6	2
101-125 ֆ.	7	2
126-150 ֆ.	8	2
151-175 ֆ.	9	2
176-200 ֆ.	10	2
201-225 ֆ.	11	2
226-250 ֆ.	12	2
251-275 ֆ.	13	2
276-300 ֆ.	14	2
301-325 ֆ.	15	2
326-350 ֆ.	16	2
351-375 ֆ.	17	2
376-400 ֆ.	18	2
401-425 ֆ.	19	2
426-450 ֆ.	20	2
451-475 ֆ.	21	2
476-500 ֆ.	22	2

Գինը եւ մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել Սեպտեմբր Տիւրքիւ ՍԱՐԳԻՍ ԳԱՅԷ. ՐԻԷԼԵՆԷՐ ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԿԻՍԿԻԱԼ ալի վիճա. կահանութեան: Մուսլա վաճառ. Եր. — Երթակոյ քաղաքինէն եկած լաճնա. բալթթիւնք փուլթով կը կատարուին:

Մ. — Ա. Կարգէն չի սկսող մը, ե. թէ սկսիլ ուզէ Բ. Կ. Ե. կամ Զ. Կար. քէրէն, ըստ կանոնադրի պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնն ալ վճա. ընլ:

ՆԱՏԵՅԷ ՄԱՐԿԱՆ ՕՐԻԵՆՏ

ՓՈՐՏՈՐԱՆ ՕՐԻԵՆՏ

Ս. ՎԷԳԵՐ

Փարսթիլլէր միւ կը գրկուին

ВОЗЛЕ САМО НА ОРИЕНТЪ ВЕЛОСИПЕДИ Фабрика заВелосипедами ОРИЕНТЪ М.Веберъ,Руссе.

ՉԱԽԻՐԻ ԲԻԱՑԱՍՐ

Վառնա, 22 Մայիս

Պուշասյ

Վալոն, լիպրա 55-58 հէք 9.50-11 ֆ. Արապա, 55-60 հէքթ. 10.20-12.:

Արաւ

Լիպրա 42-50 հէքթ. 7-7.20 ֆր:

Մըշըր

Վալոն 55-57 լիպրա. 4.10-6.20: Կիւնտէ 8.10 արապա վէ 10-12 վալոն պուլուպ վէ միսիլ՝ 5.6 արապա արաւ կէլմէքտէ տիր:

Արապա մուամէլէսի Նարօլէօն 21 ֆր. հիւսպը իլէ:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр Н. Войниковъ